



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ը Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ն

Գրականության և արվեստի թանգարանը
Խորհրդային Հայաստանի հարուստ, կարևոր
մշակութային օջախներից մեկն է, որը ծնունդ
առավ 1921 թվականին, Հայաստանում խոր-
հրդային կարգերի հաստատման սկզբին:

Հայ հոգևոր արժեքների հավաքման, մշակ-
ման, կարգավորման, ուսումնասիրության,
ներանց հրատարակության ու հանրության սե-
փականությունը դարձնելու գործում, խո-
շոր դեր են կատարել թանգարանի ղեկա-
վարությունն ու աշխատակիցները, մանա-
վանդ թանգարանի հիմնադիր, անխոնջ բա-
նասեր, գրականագետ, մանկավարժ, Ս.
էջմիածնի Գերարդյան Հոգևոր Խորհրդի եր-
բեմնի անդամ, հանգուցյալ Ծովանդ Հովա-
կիմի Շահազիզը:

Իր գոյության 45 տարիների ընթացքում,
տարեցտարի թանգարանը ձեռք է բերել
Խորհրդային Միության տարբեր քաղաքներ-
ում գտնված, հիմնականում արեւելա-
հայ գրողների, հայագետ-գիտնականների,
խմբագիր-հրատարակիչների, դերասան-
արվեստագետների, երգիչ-երգահանների և
մի քանի տասնյակ մշակութային գործիչ-
ների արխիվները, որոնք թանգարանի
հարստությունն ու պարծանքն են կազմում:

Սակայն վերոհիշյալ հարուստ ժառան-
գությանը հանդերձ, թանգարանում բացա-
կալում էին արևմտահայ և սփյուռքահայ
գրողների, մտավորականության ստեղծած
հոգևոր արժեքները, որոնք մի մասը այս
կամ այն կերպ ազատվելով ոչնչացումից,
խնամքով պահվում էին հարազատների, մի
որոշ մասը՝ հայրենասեր մտավորականնե-
րի, իսկ մի կարևոր մասն էլ իրենց հեղի-
նակների մոտ, որոնք դեռևս կենդանի են:

Վերջին տասնամյակում թանգարանի սե-
փականությունը դարձան Արշակ Զուպանյա-
նի հարուստ արխիվն ու գրադարանը (Փա-
րիզից, Մշակութային կոմիտեի միջոցով),
Թորոս Ազատյանի արխիվն ու գրադարանը
(Պոլսից, տիկին Շուշանիկ Ազատյանի մի-
ջոցով), Սիամանթոյի (տիկին Զապել Յար-
ճանյան—Համբարձումյանի միջոցով), Զա-

պիլ Եսայանի, Սեմյալի արխիվները (Փարի-
զից, հեղինակների քույրերից), Վահան Մա-
լեզյանի (հեղինակից), Տիգրան Զիթունու,
Հրանտ Թորոսյանի, Անայիսի, Ռուբեն Սևա-
կի, Ռուբեն Զարդարյանի, Զարեհ Որբունու,
Լևոն Մոզյանի, Մեհրուժան և Մկրտիչ Պար-
սամյանների, Լևոն Մեսրոպի, Աննա Բու-
ղաղյանի, հայագետ Անտուան Մեյեի և այ-
լոց ամբողջական արխիվներ կամ առանձին
վավերագրեր (Փարիզից): ԱՄՆ-ից ստացվե-
ցին Դանիել Վարուժանի (ժառանգներից),
Հովհաննես Ավագյանի, Զարուհի Գալեմ-
բյարյանի և Հակոբ Գույումճյանի արխիվ-
ները (գրող Անդրանիկ Անդրեասյանի ջան-
քերով), Լոնդոնից՝ Արշակ Սաֆրաստյանի
արխիվը և հայագիտական գրադարանը,
Բաֆֆոն վերաբերող առանձին նյութեր,
իրեր և գրքեր:

Առանձին գաղթօջախներից ստացվեցին
արխիվային կարևոր վավերագրեր պրոֆ.
Հ. Ծ. Սիրունուց, Հ. Աղաբեկյանից, դոկտ.
Հ. Ոսկյանից, Հ. Ն. Տեր-Ներսիսյանից, Իսա-
հակ վարդապետ Ղազարյանից, Ավետիք Ա-
լեքսանյանից, Ա. Տատրյանից, Վ. Երիցյա-
նից, Ա. Սալմաստյանից, Վ. Մովակից,
Ե. Մարյանից, Մ. Գովանճյանից, Գ. Թրեն-
ցից, Հ. Բալույանից, Ա. Շիրազյանից, Մել-
քոն Կյուրճյանի (ժառանգներից), Միքայել
Կյուրճյանից, Է. Կոտալազյանից, Ա. Սրապ-
յանից, Գ. Պողարյանից, Ա. Գարտաշյանից
և անհատ հայրենասերներից: Բանաստեղ-
ծուհի Սիլվա Կապուտիկյանի միջոցով Բեյ-
րութից ստացվեց Վազգեն Շուշանյանի ար-
խիվը: Պոլսից ստացվեց «Իլուզանդոն»
օրագրի արժեքավոր հավաքածուն, որ պատ-
կանել է Գևորգ արքեպիսկոպոս Ասլանյա-
նին, Եգիպտոսից Վահան Հաբեշյանի գրա-
դարանը և այլն, իրենց կարգին հարստաց-
րին թանգարանի գրադարանը:

Սփյուռքից ստացված արխիվների և գրա-
կանության ուսումնասիրությունը մեծ չա-
փով նպաստում, օժանդակում է թե՛ իրենց
հեղինակների կյանքի ու գործունեության և
թե՛ վերջին 50-ամյակում սփյուռքահայ

գաղթավայրերի պատմությունը ըստմակողմանի լուսարանելուն: Ապա հարուստ նյութերը, կարևոր վավերագրերը իբր աղբյուր են ծառայում մեր գիտնականներին՝ ուսումնասիրելու հայ և այլ ժողովուրդների գրական, մշակութային կյանքը, օտար գրողներից հայերեն և հայ հերինակներից կատարած թարգմանությունները, իմանալու անվանի դեմքերի կարծիքները հայկական հարցի, անցյալ և ներկա մշակույթի, նրա կատարած դերի և այլ կարևոր խնդիրների մասին: Գրականության և արվեստի թանգարանը, ստացված արխիվները գիտական մշակման ենթարկելուց հետո, հնարավորություն է տալիս գիտնականներին, ուսանողներին և առանձին մտավորականներին մենագրություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ գրելու իրենց հետաքրքրող հարցերի մասին և ընթերցողների սեփականությունը դարձնելու այն, ինչ փրկվել է կորստից և հարստացնում է մեր մշակույթը:

Թանգարանում սուկսւ վավերագրերի հիման վրա, հրատարակվեցին ղոկու.-պրոֆ. Հրանտ Թամրազյանի «Սիամանթո» բարձրածրածք մենագրությունը, ղոկու.-պրոֆ. Էզվարդ Զրբաշյանի «Ռուբեն Սևակ» խորագրով ուշագրավ ուսումնասիրությունը (բանաստեղծի ծննդյան 80 և մահվան 50-ամյակի առթիվ), Գառնիկ Ստեփանյանի «Ա. Արփիարյան», Սևակ Արզումանյանի վերջերս հրատարակած «Զայել Եսայան», Հայկ Ղաղարյանի «Մատթեոս Մամուրյան», Հեկտոր Ռշտունու «Դանիել Վարուժան», Լ. Մարգարյանի «Տիգրան կամսարական», Ա. Շարուրյանի «Արբուհի Տյուսաբ» և մի տասնյակի հասնող նոր ուսումնասիրություններ՝ Վ. Թեքչյանի, Պ. Դուրյանի, Վ. Շուշանյանի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Ռ. Սևակի, Առանձարի, Տ. Զյուլյուրյանի, Սիպիլի, Երուխանի և այլոց մասին, որոնք կհրատարակվեն առաջիկայում:

Ստացված արխիվային նյութերի հիման վրա, թանգարանը հրատարակության է պատրաստել Դանիել Վարուժանի «Նամականի»-ն, որը «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց 1965 թվականին: Նույն թվականին հրատարակվեց նաև Զարուհի Գալեմբյուրյանի երկերի ժողովածուն: 1966 թվականին լույս կտեսնի Զ. Եսայանի «Բարբու խաչիկ» մեծածավալ վեպը, որի ձեռագիրը պահվում է թանգարանում, Վաղգեն Շուշանյանի երկերի ժողովածուն, Սե-

մայի մի հատորյակը, որոնց ձեռագրերը դարձյալ թանգարանի սեփականությունն են կաղմում: Առաջիկա տարիներին հրատարակության համար նախապատրաստվում են Ա. Արփիարյանի, Զ. Եսայանի, Զոհրապի, Սիամանթոյի, Զարդարյանի, Թվատինցու, Ռ. Սևակի և Ա. Հարությունյանի նամակները՝ որպես «Գրական ժառանգություն» մատենաշարի հերթական հատորներ:

Թանգարանի երաժշտական բաժնի հարուստ և թանկարժեք արխիվների թվին է պատկանում հայ մեծահունճար կրգահան, անմահ Կոմիտաս վարդապետի արխիվը, որն ստացվել է Փարիզից, օրիորդ Մարգարիտ Բարսայանից և Կոմիտասյան հանձնաժողովից: Հետագայում Սփյուռքից ստացված նյութերով համալրվել է Կոմիտասի ժառանգությունը, որի ուսումնասիրությունը ձեռնամուխ է եղել և հրատարակության գործը հմտորեն իրագործում է կոմիտասագետ երաժշտագետ Ռ. Աթոյանը:

Մեծ արժեք է ներկայացնում նաև Տ. Զուխաջյանի, Ալյան Հովհաննեսի, Նիկոլ Գալանդբեյանի, Գ. Սյունու, Վ. Սվաճյանի և մյուս երաժիշտների ժառանգությունը, որոնք կենտրոնացվել են թանգարանում Սփյուռքի տարբեր վայրերից: Այստեղ հիշատակենք Փարիզից ԺԱՅ-ի (Ֆրանսահայ երիտասարդական կաղմակերպության) միջոցով և ջանքերով ստացված իտալացի երաժշտագետներ Ա. Սկարլատիի և Ն. Պիլինիի՝ Տիգրան Մեծին նվիրված երկու օպերաների ընթերցանությունը, լիբրետոների միկրոֆիլմը, որոնց բնագիրը պահվում է նեպոլի թանգարանում և որոնց ընթերցանությունը իրագործել է երաժշտագետ Ավետիս Գ. Մեսումենցը: Ստացված նյութերն օգտագործվում են մասնագետների կողմից: Ատացված են նույնպես հայ թատրոնի պատմությանը վերաբերող ինչպես Սմրատ Դսովթյանի, Սուրբարյանի, Ա. Շահխաթունու, այնպես էլ մյուս արվեստագետների արխիվային նյութերից:

Հնարավոր չէ մի առ մի թվել այն բոլոր արժեքները, որոնք կենտրոնանում են հայրենիքում, սակայն, մեծ է այս գործում ո՛չ միայն կաղմակերպությունների, այլև գրողների, գործիչների և առանձին հայրենասերների կատարած գերը, որոնք ոչ մի ջանք ու ճիգ չեն խնայում՝ օգնելու հայրենիքին:

ԳՈՂԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

